Շամախու քաղաքն, որ և բարկացեալ իսպառ քանդեաց. վասնորոյ անճարացեալ եկին առիս յաղերս, որ և ես սրտապնդեալ արզ արարի մեծի Վալինամաթին, և խնդրեցի ի նմանէ՝ տալ Հրամանն Շամախեցի Հայոց արտաքոյ նոր շինած բերդին՝ ժամու մի ճանապարհ հեռի ի բերդէն ի տեղի մի վայելուչ՝ զոր նոքա խնդրեցին, շինեսցեն վասն իւրեանց բնակութեան, և հող ըստ պիտոյից, զի տնկեսցեն այգիս և արասցեն արտս, այլ և ի գետոյն՝ զոր գըտանիւր անդ մերձ՝ առու մի ջուր, զի առոգանիցի գիւղն և արտորայքն և այգիքն իւրեանց, այլ և վասն շինելոյ եկեղեցի մի, զի անհնար է Հայոց ապրին առանց եկեղեցւոյ բնակիլ ի տեղի մի՝ թէ և դրախտ իցէ, և վասն ճեզիէյին և այլազգիքն զիւրեանք մի՝ նեղացուսցեն և մի խուիցեն. և առ ժամայն շնորհօքն Աստուծոյ քաղցրացաւ սիրտն և զիջաւ ի խնդիրս իմ, և վաղվաղակի շնորհեաց զրախտներ ընդարձակ բանիւք գրեալ զբոյրուլթուն առաւել քան զխնդիրն իմ, յորմէ առեալ գնացին մեծաւ ուրախութեամբ և շնորհակալութեամբ՝ օրհնելով զԱստուած»։

Այս քաղաքի վերջին աւերը – ինչպէս պատմեն Աբրահամ և Եսայի կաթուղիկոսունք - եղել է Նադիր Շահի ձեռքովը, որ Շամախւոյ բնակչաց վրայ բարկացած լինելով՝ քանդել է Շամախին և ժողովուրդը փոխադրել է Աղսու անուանեալ տեղը, ուր հնումն եղել է Զիրուան քաղաքը, որ դաշտի վերայ է լերանց վերջին ստորոտումն և Աղսու գետի եզերքին։

Տեղւոյն օդը լինելով վնասակար և ջուրը ջերմ ու տենդ բերող, մարդիկը չեն կարողացել անել, որպէս և այսօր խակուտի և Նադիր Շահի մահուանից յետոյ 1750 թուին, տեղական իշխանութեան ձեռքով վերադարձել են Շամախի. ապա 1810 թվին Մուստաֆայ Հայասէր մեծանուն Խանի ժամանակ փոխադրուել են Ֆիթ անունով լեռնադլխի տափարակ տեղը, որ մի ապահով տեղ է թէ օդի մասին, և թէ ապրստակութեան մասին, ուր բաւական տարիք մնալով՝ նոյն Մուստաֆայ Խանի